

ԱՂԹԱՄԱՐՅԻ

Գրքի՝ հրնօրեայ ֆերքուած մ'իմն համար,
Թափուն խօսքերով, կախարդանքով լի.
Թող այնտեղ բացուի հորիզոն մ'անծայր,
Եւ կեանքիս ուղին երբեք չըհատնի:

Ես ըլլամ քեզի բուրեան վարդաստան,
Եւ դուն գաս այցի անցեալ երազով,
Հոն նըստած մենակ քարի մը վըրան,
Փնտռես իմ գարունս տենչերու երգով:

— Արի ե'կ, հոգիս, ծաղկեցաւ այգին,
Քերթողի սիրտն է Յուլիսի արեւ.
Արի ե'կ, հոգիս, նըստինք միասին

Վանի կապուտակ ծովակին առջեւ.
Ես քնար բերի եւ փարչ մը գինի.
Արի որ նըստինք սիրոյ սեղանի:

Վենետիկ, 1962

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ

Սո'ւրբ հայրենիք, տաճար մ'ես դուն, տաճար մ'անհուն,
Որուն ոսկի խորանին վրայ սրկիք մը կայ
Նահատակի եւ հերոսի արեամբ լեցուն.
Ոսկորներով անոնց կերտուած խաչ մը հսկայ:

Խոր եւ մըքին անկիւններէն դեռ կը լսուի
Աղեմովիկ հառաչանքներ չարչարանքի.
Ամէն գիշեր վերնատունէն կը փոքորկի
Պատգամն ահեղ լուսակառոյց մեր Անցեալին:

Շուրջը բոլոր նոնիներ կան, ըլլաւ գոգցես
Սոսկ գերեզմանն իմ պապերուս, մինչդեռ ահա/
Գմբէթին տակ արծիւ մ'իր քեւը կը բանայ:

Սո'ւրբ հայրենիք, աստուածակերտ վեհ տաճար մ'ես,
Որուն ամէն մէկ քարին մէջ սիրտ մը հրեղէն
Ազատատենչ կը բարձրէ վայրագօրէն...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

● ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ●

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱ-
ԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Հատոր Ա. քղբակազմ, ութածալ, էջ 304, նկարազարդ, Երեւան, 1948: Հատոր Բ. նոյնպէս, էջ 280, անդ, 1950: Հատոր Գ. նոյնպէս, էջ 168, անդ, 1950: Հատոր Դ. նոյնպէս, էջ 258, անդ, 1952: Հատոր Ե., լաքակազմ, ութածալ, էջ 280: Գին, բոլորը միասին՝ 60 ռուբլի 70 կոպէկ:

Պարբերականիս նպատակն է հրատարակել Հայաստանի հնագիտութեան, պատմութեան եւ ազգագրութեան նուիրուած գործեր: Գործին պատասխանատու խմբագիրն է թանգարանին ներկայ վաստակաւոր եւ կարող տնօրէնը՝ Պրոֆ. Կարոյ Ղաֆազարեան:

Ա. հատորին առաջին յօդուածը ստորագրուած է Կարոյ Ղաֆազարեանի: Խիստ շահեկան աշխատութիւն մըն է աւելի «Հնագիտական Աշխատանքը Հայաստանում Սովետական կարգեր հաստատուելուց յետոյ»: Թանգարանը 1948-ին ունեցեր է Հայաստանի մէջ գտնուած 34.000 հին դրամներ, 14.000 հնագիտական իրեր եւ 6.500 ազգագրական իրեր: Բնական է անկէջ ի վեր շատ ու շատ աւելցած են բոլոր հնագիտական դրամները, իրերը եւ այլն: Այս թիւին 65 էջերուն մէջ Ղաֆազարեան ձեռնհասօրէն կու տայ իր նիւթին վերաբերող շահեկան տեղեկութիւններ:

Ասոր կը յաջորդէ Յարութիւն Մնացականեանի «Արեւապաշտութեան հետքերը հին Հայաստանում ըստ բրոնզէ պեղածոյ իրերի»: Նկարազարդ, շատ հետաքրքրական յօդուած մըն է այս, որ կ'աւարտի էջ 95:

Յաջորդ ուսումնասիրութիւնն է Հո. Զանգիւղեանի «Միւլիթար Գողը եւ Նոր Գետիկի վանքը»: Նոյնպէս նկարազարդ,

ճոխ է յիշատակարաններով: Նոր Գետիկայ շինութեան առթիւ է նուէր տրուած Աւետարան մը, Սաղուն առաջին իշխանէն: Այս Աւետարանը, որ իր յիշատակարանով անծանօթ մնացած է մեր բանասիրութեան, այժմ կը գտնուի Սըր Զէթըր Պիթիի մատենադարանին մէջ, որ նուիրուած է Իրանտայի Տըպլին քաղաքին: Այս գրչագիրը՝ հրատարակուած ցուցակին մէջ՝ Օր. Տէր Ներսէսեան նշանակած է իբր Սաղուն Գ. է նուիրուած ինչ որ Միւլիթար առաջնորդի, որուն ինքնութիւնը անծանօթ կը մնայ իրեն:

Հոսիսիմէ Զանգիւղեանի այս ուսումնասիրութիւնը մեծապէս զնահատելի եւ շատ արժէքաւոր աշխատութիւն է. իցիւ թէ նկարները աւելի շատ ըլլային եւ եղածներն ալ աւելի որոշ ու յստակ:

Ասոր կը յաջորդէ Ասլան Շահնազարեանի «Բագրատունեաց նախարարական տոհմի ծագումը»: Մանրակրկիտ պրպըտումով աշխատանք մըն է, որուն վերջը կ'եզրակացնէ թէ Բագրատունիները հրեայ ծագում չունին, եւ Հայ հին իշխանական տոհմերուն շարքին առաջնակարգներուն մէջ են եղած, եւ արդէն Արտաշեսեան հայկական թագաւորութեան շրջանին մեծահամբաւ:

Այս թիւին վերջին ուսումնասիրութիւնը ստորագրուած է Ամինէ Ավդալէ եւ կը ներկայացնէ «Քուրդ կիւնը նահապետական ընտանիքում՝ ըստ ազգագրական եւ Թուրքիայի նիւթերի» (էջ 213-301): Ազգագրական շահեկան նիւթ է:

Պարբերականին Բ. հատորը կը բանայ Ասլան Շահնազարեանի «Միւլիթար Գողը Սաղունակունք գիւղի մօտ յայտնաբերուած գանձը»: Ունի դրամական բազմազանութիւն տախտակ մըն ալ: Մանրակրկիտ նկարազարդութիւն մըն է գտնուած դրամներուն:

Խիստ հետաքրքրական աշխատութիւն մըն է Վալենտինա Արքահամեանի «Միջնադարեան Հայաստանի զէնքերի տեսակները» (էջ 37-98): Նկարազարդ այս ուսումնասիրութիւնը հնագիտական խղճա-